բենց սաների թիւը շուտով հազարներով կը հաշուեն։

— Ուրֆայում Ամերիկ. միսիոնարուհի միս Շատրքի ձեռներեցութեամբ բացուած որբանոցի մէջ սկզբում ապաստանարան դրուած 77 տղայ և 83 աղջիկ սաների թիւը 200-ի է հասել։ Այդ որբերի մի մասը խնամուում են Քէմպրիջի համալսարանի ուսուցչապետ Հէրիսի և իւր կնոջ օժանդակութեամբ, իսկ միւս մասը ամերիկացի բարեգործների։ Այդտեղ մաս ունի և Գերմանիայում վերջերս կազմուած մի ընկերութիւն՝ Բեռլինի ուսուցչապետ յայտնի Լէպսիուսի նախաձեռնութեամբ (որը ունի և իւր առանձին օրգանը Cristliche Oriant)։ Արդէն Ուրֆայ են հասել միս Պատրուցի (որն արդէն սկսել է հայերէն սովորել), Փալշէր և Լիկարտ գերմանական ընկերութեան ծախքով պահուող որբերի խնամատարութեան համար։ Իսկ ընդհանուր վերահսկողութիւնը մնում միս Շատրքի վերայ։

— Ռուսական Բօրդէզ իշխանուհին յանձն է առել որդեգրել և դաստիարակել մօտ 25 երիսուն հայ որբեր։ Նորերս Ջինովա ուղարկուեցան Մալաթացի 4 աղջիկ և 8 տղայ հայ որբեր՝ այնտեղ դաստիարակուելու համար։ Դոցա հետ ուղարկուեցան և Աղարեան պատրիարքի կողմից ինը որբ՝ Նէապոլ հասցնելու համար։ Ռուսական դեսպանի կնոջ ձեռքով Ջինովա են ուղարկուած Արաբկերցի 6 աղջիկ և 5 տղայ որբեր, որոնցից առաջինները պիտի դաստիարակուին Մոնսոմանս քաղաքում, իսկ վերջինները Ռեկանատոյում։ Եթէ այս եղանակով շորուռնակուի հայ որբերի խնամատարութեան խնդիրը, շուտով կոտորածներից ազատ մնացած բոլոր որբերը զանազան քարոզչական ընկերութիւնների ձեռքը կանցնին, որոնց հոգատարութեան ու խնամատարութիւնն այնքան էլ բուն քրիստոնէական ոգուց բղխող ազդիւրներից չեն։ Մի քանի տեղերից արդէն հայ որբերից ոմանք թողում փախչում են, առաւել լաւ համարելով նախկին խեղճուկ վիճակը՝ քան այդպիսի դաստիարակութիւնը։

— Լոնդոնի մէջ բնակուող հայերը իրենց մէջ հանգանակութիւն անելով յօգուտ որբերի՝ ուղարկել են ի տեսութիւն Ս. Պատրիարքի։

ԲՈՒԼԳԱՐԻԱ.

Բուլգարիայի իշխանապետութեան հրամանով երկրի ներսի քաղաքները բռնութեամբ ուղարկուած հայ գաղթականներից շատերը նորից վերադառնում են Վառնա, որովհետև ոչ մի գործ չկարողացան գտնել ուղարկուած տեղերում։ Կառավարութիւնը ոչինչ արգելք չէ դնում նոցա վերադարձին։ Շատերը պատրաստուում են վերադառնալ երկրին Կ. Պոլիս, իսկ ոմանք այլ տեղ գաղթել։ Նպաստ այժմ ընդունում են միայն հիւանդներն ու խիստ կարօտեալները։ Աւստրիական շոգենաւով Վառնա հասնող 8—10 ընտանիք գաղթականները, որոնք Պոլսից Կիպրոս և Բերիա էին գնացել, պատմում են, որ Միջերկրականի կղզիներն ապաստանող հայ գաղթականները մեծ նեղութեան մէջ են, որովհետև աշխատանքի ոչ մի ազբիւր չկայ։

— Անգղիայից 10 սնդուկ հանդերձեղէն է ստացել Օր. Փրայդէր Զատկական տօներին Վառնայում եղած կարօտ հայ գաղթականներին բաժանելու համար։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ Վ. ԵՂԱՓԱՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ յանուն Տ. Գարեգին քահանայի Խաչատրեան, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ զլանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. փոխ-թեմակալին Երևանայ. հմր. 135։

— Յանուն Տ. Վարդան քահանայի Վաղարշապատ զեղջ հմր. 136, որով շնորհի նմա կոչումն աւագ քահանայութեան, ըստ միջնորդութեան Գեր. փոխ. թեմ. Երևանի։

— Յանուն Սինոդի հմր. 137, որով պատուիրեցաւ շրջաբերականաւ հրատարակել, զի յետ այսու վասն գործոց պատկի մի ուղարկել են ի տեսութիւն Ս. Պատրիարքի։

դիմեսցեն առ Վեհափառ Տէրն, այլ առ մերձաւորն իւրեանց հոգևոր իշխանութիւնք։

— Յանուն Տ. Արէլ քահանայի Ղըզըլթամիր գեղջ հմր. 154, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական վասն ժրաջան ծառայութեան նորա յօգուտ եկեղեցւոյ տեղւոյն և գաղթականաց։

— Օրհնութեան յանուն քաղաքական ժողովոյ Կ. Պոլսոյ հմր. 168, որով յուշ առնի նոցա զպարտաւորութենէ իւրեանց։

— Յանուն կրտսեր լուսարարի Մայր տաճարի Տ. Ադամ վարդապետի հմր. 177, որով շնորհի նմա լանջախաչ ականակուռ։

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն Հայուհեաց բարեգործական ընկերութեան Դաւրիժու՝ հմր. 184։

— Յանուն Տ. Կորիւն վարդապետի հմր. 187, որով կարգի քարոզիչ գիւղօրէիցն Էջմիածնի գաւառի յընթացս մեծի պահոցս։

— Յանուն Տ. Մեսրովբ քահանայի Մելեան հմր. 209, որով շնորհի նմա կամիլաւակայ զկնարկ։

— Հաստատութեան նորընտիր հոգաբարձութեան թեմական հոգևոր դպրանոցին Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ հմր. 211։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Ստեփաննոսի Գասպարբէկեան վասն 10-ամեայ արդիւնաւոր և հաւատարիմ ծառայութեան նորա ի պաշտման գանձապետութեան ս. Էջմիածնի ի հին Նախիջևան՝ հմր. 212։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Սարգսի Թամազեան Աստրախանցւոյ հմր. 217, վասն նուիրելոյ նորա զքարեայ տունն իւր արժողութեամբ 5000 բուբլեաց ի սեփականութիւն աղքատանոցին Աստրախանի։

— Յանուն Կրօն. ժողովոյ Կ. Պոլսոյ հմր. 227, որով լուծեալ համարի պսակն Մարիամու Սարուխանեան ընդ Գարեգնի Նշանեան ի պատճառս ընդունելոյ առն նորա զԱթէնս զդաւանութիւն յունաց և ամուսնանալոյն ընդ այլում կնոջ, թոյլատրելով յիշեալ Մարիամու մնանել ի նոր ամուսնութիւն, ըստ միջնորդութեան կրօն. ժողովոյ։

— Մխիթարական յանուն պ. Վահրամայ Մուրատիեան հմր. 229, ի պատճառս մահուան հօր նորա Կարապետ—Աղայի։

—Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, հմր. 248, որով պատուիրի յատկացուցանել զարդիւնս մամուսվաճառութեան թեմին Երևանայ հոգևոր Դպրանոցի տեղւոյն, ևս և թոյլ տալ վիճ. Ատենին ժողովել տարեկան նուէրս յեկեղեցեաց թեմին ի նոյն կէտ նպատակի։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի հմր. 252, որով Տ. Մեսրովբ Արքեպիսկոպոսն կարգի ի վանահայր Երնջակու ս. Կարապետի վանուց, իսկ արդի վանահայր Տ. Միքայել վարդապետն Տ. Մինասեան փոխադրի ի Հաղարծին պաշտօնիս վանահայրութեան։

— Օրհնութեան յանուն Աղէքսանդրի Տ. Սարգսեան հմր. 259 վասն նուէրի նորա հնագիտական ժողովածուի։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի հմր. 278, որով պատուիրի թողուլ զՏ. Սարգիս քահանայն Շիրոյեան Նորաշէն եկեղեցւոյ Տրփղեաց ի նոյն եկեղեցւոջ յօգնականութիւն Տ. Գէորգ աւագ քահանայի Տէրտէրեան, որպէս անօրինեալ է վասն նորա յամին 1895։

— Յանուն Գեր. Տ. Մեսրովբ արքեպիսկոպոսի, որով կարգի վանահայր Երնջակու ս. Կարապետ վանից. թ. 283։

— Յանուն Տ. Մարտիրոս քահանայի Գանձապետեան Նոր Նախիջևանի, որով շնորհի նմա արտօնութիւն կրել զկամիլաւակայ, թ. 302։

— Յանուն Տ. Գրիգոր քահանայի Բալդեանեան Նոր Բայազիտու, որով շնորհի նմա խաչ լանջական. թ. 305։

— Յանուն Տ. Արիստակէս քահանայի Նալբանդեան Աղէքսանդրապոլու, որով շնորհի նմա խաչ լանջական. թ. 306։

— Յանուն Տ. Աբրահամ քահանայի Սպանդուեանց, որով շնորհի նմա արտօնութիւն կրել զկամիլաւակայ. թ. 309։

— Յանուն Տ. Ահարոն քահանայի Օշական գեղջ, որով շնորհի նմա արտօնութիւն կրել զկամիլաւակայ. թ. 311։